

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 26

26 ՅՈՒՆԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հիւանդանոցին շուրջը (Խմբագրական) Տ. Ա. — Մոլորանք (Նորավեպ) Շ. ՇԱԽԱՐՇ. — Բժրե-
կական ասուլիս. Մ. ԶԻԼԵԱՆ. — Բանաստեղծութիւններ. «Յաւի խօսքեր». Մ. Ա. ՊԱՐՍԱՄ.
ԵԱՆ. «Բնութեան երգերը» Շ. — Սենդ Լուիսի Արուեստահանդէսը. Վ. Ա. Դ. — Խմբագրա-
կան Նօթեր. — Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթօրէի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դր. 5
եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ
5 ռուպլի: Թղթաստացական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայ-
մաններով:

Զեմ-Քէ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՏԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻԴԵՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդայից ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյժքած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վօսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, Նաեւ Պօռտուի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Փառտինիէրի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտային ծախսեր, Նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մանուստ փաշա, Պէօլիք Երեւոյ խան, թիւ 14, Լա Գօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւր վաճառատուն մը, Շուկայ Սահաֆար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ մէջ կը վաճառուին հետեւեւէն որ հրատարակութիւնք. —

1.—Արձագանգ խաղաղութեան. հեղինակ. իշխան Միքայէլ Ռիգ. Խան Տանիշ (Պարսկ-
գետական ի. Կ. Պօլիս) Ոսանաւոր քերթուած մը ի իշխանակ Լաւիշի խաղաղութեան հա-
մաժողովին, տասնընիւնգ լեզուներու թարգմանուած փառաւոր գեղարուեստական հատար
մը հեղինակին կենդանագրով միասին: Գին կէս Օսմ. ոսկի կամ 12 ֆրանք. —2. Հերոս
պերթ Սրենսըրի «Կենցաղ կամ Դաստիարակութիւնը»: Տիեզերահռչակ իմաստասերին այս
բաղձագաւ գործը թարգմանուած սահուն աշխարհագրորի, կ'արժէ որ ամէն գրադարանի
մէջ իր մասնաւոր տեղն ունենայ. Գին 10 շրուշ. 3. Գերման բրոֆէսէօր Ա. Ալպրէխթի
գործերէն սեռային տաղլարանութեան վրայ խօսող «Մարդը եւ իր ցեղը» աշուն խիստ
շահեկան գործին Բ. Տիպ. —գին 5 շրուշ. 4. Ժաղովրդական քարոզներ. «Կեանքը առանց
հաւատքի», գրեց Ներսէս վրդ. Դանիէլեանց գին 5 շրուշ. 5. Շարանկանք Հայ. Ս. Եկե-
ղեցւոյ, աշխարհագրորի վերածեց Ե. Տ. Անդրէասեան: —Գին Ա. հատորի 2 շրշ, Բ. հա-
տոր 5 շրշ.



Անկարելի է որ քնտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սնննայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՐ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա.
Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի լեզի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-
միանգամայն մեքենաներ
կը զանուկին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ՝

ՏԱՐԱՆԱՎՃԱՐՈՒՄԵՐ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄԵՐ

ԱՅՐԱՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ԱԿԻԻՏԱՐ

2արշը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն:

Մասնահիղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,

Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Հիւանդութեանց դէմ ապահով է ելի եր մէջը, չի գտնուի շիջմը



SCOTT'S EMULSION

(ԸՆԳՕՔԻ ԲԱՂԱԿՐՈՒԹՅՈՒՆ)

Թորքախտ, սրտնշտ, հալ, հարբուխ և բարակացալ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոյլ (սըրաճա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է: Առաջին անգամ անոնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Ամեն տարի հաղարաւոր տղայք մահուանէ աղատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրու թիւներ կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Վեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուսանողներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատճառով վարդազոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաճեցները և բեղաճեցները եւ ծեծէն:

ԳՈՐԾԱՐԱՆ

Դորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմուտ-փաշա, Թարազճրար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)

Այս հանրածառութ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փայտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց ո՛ր եւ է բոլոր կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով մնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Թանձարարութիւնը պէտք է ուղղուին դրասենեակը:

Դիւրամատչելի պայմաններ:

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou Banderkali

Ձեղերու, լեարդի եւ ստամոքսի հիւանդութեանց մասնագէտ

Բարիգի հիւանդանոցներուն մէջ գործնական փորձեր կատարելով վերագրեալ հիւանդութեանց համար մասնագիտութիւն ձեռք բերած է: Իրեն զիմողները կը դարձանէ ամէն օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համադ հիւանդանոցի հիւանդատնարանին դէմ, թիւ 5 տունը, իսկ առատունները միջեւ կէսօր Պօլիս կամուրջին գլուխը Բոսթաքի Արսէնաքիի թիւ 71 դեղատունը: Քիչ ատենի մէջ կը դարձանէ ջլալին տկարութիւններ, լուսնոտութիւն, անդամալուծութիւն, գլխու ցաւ, օրտի բաւաւաւ, անքունութիւն, ափսոյդիտեան ախտ, յոգացաւ, օտոմօքսի հիւանդութիւններ, դժուարամարսութիւն, արգանդի հիւանդութիւն եւ այլն: Դարմանման համար ներարկուելով ելեկտրականութիւն կը գործածէ: Ելեկտրական դարմանի համար մասնաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՍ

547 ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 26

26 ՅՈՒՆԻՍ 1904

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՇՈՒՐՋԸ

Վերջին ժամանակներս դիտուեցաւ ու գրուեցաւ թէ, Հիւանդանոցի Հոգաբարձութեան Ատենայեա Վսեմ. Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի վերադարձէն ի վեր՝ այդ Հաստատութեան ներքին գործերուն բարւոքման ու կազմակերպութեան նոր դարկ մը կը տրուի։ Իրարու յաջորդող պարագաներ ցոյց տուին արդարեւ թէ որքան ճիշդ էր այս արձագանգը և կը համապատասխանէր իրողութեանց։ Առաջին ու կենսական պէտքը որ կը ներկայանար Հիւանդանոցին համար՝ կարող Տնօրէնի մը ընտրութիւնն էր, որուն կարելի ըլլար վստահիլ այդ բազմաճիւղ Հաստատութիւնը, վասն զի Հոգաբարձութիւն մը, իր բոլոր բարեկամեցողութեամբ հանդերձ, չի կրնար պէտք եղած հսկողութիւնն ի գործ դնել մօտէն. ատեն ատեն զեղծումներու, թերութիւններու, խնամքի պակասութեան լուրեր կը լսուէին, որոնց առաջքը հարկ էր առնել հիմնական կերպով ու կրկնութիւնն արգելել, Համաճեան Յակոբ էֆ.ն, նորընտիր Տնօրէնը, կըստանձնէ այս դժուարին գործը և իր մասին տրուած նպաստաւոր վկայութիւններուն նայելով՝ պիտի արդարացնէ իր վրայ դրուած վստահութիւնը։ Ինքը, թէև արուեստով փաստաբան, բայց կառավարչի օգնականի պաշտօններ վարած է գաւառներու մէջ, ու Կարին գտնուած բաւական տարիներու միջոցին ալ մասնակցած է Առաջնորդարանի Ժողովներուն, այնպէս որ կրկին տեսակէտներով վարչական փորձառութիւն ունի։ Հիւանդանոցի մը Տնօրէնէն պահանջուածը խստութիւն մըն է որ չէ թէ դժամութիւն նշանակէ, այլ անաչառութիւն, սրատեսութիւն

և ուշադրութիւն։ Եւրոպական հիւանդանոցներու մէջ Տնօրէններ տեսած ենք որ այս յատկութիւնները ու աւելին իսկ կը միացնեն իրենց անձին վրայ, շատ բարեհամբոյր երեւոյթի մը տակ, մինչդեռ մեր մէջ, մեր կրթական ու բարեգործական հաստատութիւններուն մէջ այլապէս կըմբռնուի խստութիւն ըսուածը, և ստորադաս պաշտօնեաներն ալ նոյն ոգիով կը վարուին։ Հիւանդանոցի Տնօրէն մը եթէ գործ ունի բազմաթիւ պաշտօնէութեան մը հետ որոնց հետ չի կրնար թոյլ վարուիլ, միեւնոյն ժամանակ կոչուած է վերին հսկողութիւնը կատարել հիւանդներու, անկեալ ծերունիներու, ջլախտաւորներու, ընտանեկուրկ տղաքներու, որոնք փափկութեան և քաղցրութեան կը կարօտին։ Համաճեան էֆ.ն անշուշտ պիտի դիտնայ այս երկու ներհակ պահանջումները հաշտեցնել իր պաշտօնին կիրառութեանը մէջ։

Նշանակալից ու գոհացուցիչ պարագայ մըն է նաև Յարութիւն էֆ. Ասլանեանի անդամակցութիւնը Հոգաբարձութեան, զոր այս վերջինն առաջարկեց ու Վարչութիւնը հաստատեց։ Ասլանեան էֆ. տարիներէ ի վեր անպաշտօն կերպով կը գործակցէր արդէն Հոգաբարձութեան, մասնաւորապէս աշխատած ըլլալով Հիւանդանոցը առատ ջուրով օժտելու պէտքին գոհացում տալու, պարտէզին բարեղարդութեանը և ուրիշ առողջապահիկ միջոցներու գործադրութեանը։ Իրրեւ անդամ Հոգաբարձութեան, աւելին պիտի ընէ անշուշտ։ Հոգաբարձութեան Վսեմ. Ատենայեա տը գրեթէ միշտակ մնացած էր երկու—երեք գործօն պաշտօնակիցներով,

մահերու և մեկուսացումներու բերմամբ, և ինք առաջին փափագողն է որ այդ մարմինը իր ամբողջութիւնը գտնէ, աշխատութեանց բաժանման դրութեամբ վարելու համար Հիւանդանոցին ծանրաբեռն գործերը, թէև մեծադոյն բաժինը կը մնայ միշտ Ատենայպետին վրայ որ այսքան տարիէ ի վեր սիրայօժար կը տանի զայն՝ ինչպէս կը նուիրէ իր ժամանակն ու աշխատութիւնը, օրինակելի անձնութիւն մը և հոգածութեամբ մը:

Հիւանդանոցի գործերուն վրայ խօսելու առթիւ, կարելի չէ զանց ընել յիշատակութիւնը Տիկնանց խնամակալութեան որ իր կնոջական բարերար դերը կը կատարէ առնական կորովով մը: Անոնք միայն որ մօտէն ականատես եղած են անոնց գործունէութեանը՝ Հիւանդանոցի զանազան յարկարաժիններուն մէջ, ընտանեկան խնամքին դուր կը նուիրեն, մասնաւորապէս կիներուն ու պղտիկներուն, իրենց այցելութեան միջոցին, ճերմակեղէններուն պատրաստութեանը, ներքին մաքրութեան հսկողութեանը և այլն, կրցած են կատարեալ գաղափար մը կազմել խնամակալութիւնը ոգտակարութեանը վրայ: Իբրև կողմէ, հաճոյք մըն է տեսնել կամ իմանալ, թէ ֆարեկեցիկ դասի պատկանող տիկիներ ու օրիորդներ, որոնք տարբեր կեանքի մը վարժուած են իրենց ընտանեկան յարկին, իրենց սալօններուն մէջ, Հիւանդանոցի սեմէն ներս՝ քղանցքին կը ժողվեն ու ճերմակ գոգնոցներ կապած՝ կը մտնեն խոհանոցը, լուացարանը, հիւանդարանը, իրենց անձին օրինակովը խրախուսելով ու ներշնչելով՝ հիւանդապահ, հիւանդապահուհի, ու երկսեռ ամբողջ պաշտօնէութիւնը:

Ասոնք և յարակից պարագաներ, ինչպէս նաև Հիւանդանոցին նկատմամբ Հոգաբարձութեան կողմէ ծրագրուած ու հետզհետէ գործադրուող բարեփոխումներ ընդհանուր դահուսակութիւն միայն պատճառելու բնութիւն ունին, զօրացնելով հանրութեան վստահութիւնը բարեգործական այդ մեծ Հաստատութեան վարչութեան, մատակարարութեան և հսկողութեանը վրայ:

ՀՈԳԵ ՀԱՆԳԻՍՑ

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ, ի նշան երախտագիտութեան և ի յարգանս յիշատակի՝ Հիւանդանոցի բարերարներէն բարեյիշատակ Միքայէլ էֆ. Յակոբեանի, Կրօն. Ժողովի Ատենայպետ Տ. Գրիգորիս արքեպիսկ. Յովհաննէսեան հրաւիրուած է Հոգաբարձութեան կողմէ, հանդուցելոյն մահուան քառասնօրէին առթիւ հոգեհանգստեան պատարագ և պաշտօն մատուցանել այս կիրակի, 27 յունիս, Ս. Փրկչի մատրան մէջ:

Սամաթիոյ Ս. Դէորդ եկեղեցւոյն մէջ ևս, Յակոբեան ընտանեաց փափագանօք, պատարագ պիտի մատուցանէ Պատր. Փոխանորդ Սրբազանը և յետոյ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի հանդուցելոյն դէրեզմանին վրայ:

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԵ

Ծանօթ ուսուցիչ և դասագիրքերու հեղինակ Սիմօն էֆ. Դափամաճեան երկարաշունչ աշխատութեամբ գլուխ ելլելիք բանասիրական գործի մը ձեռնարկած է, հրատարակելով Նոր Բառգիրք մը որուն առաջին երկու պրակները լոյս տեսան արդէն: Ամբողջ երկասիրութիւնը պիտի բաղկանայ 1000է աւելի էջերէ և պիտի բովանդակէ նախնեաց բառեր, գաւառական բառեր, հանրագիտական հատուածներ՝ գիտութեան, երկրագործութեան, առողջաբանութեան, արուեստի, ճարտարութեան, վաճառականութեան վրայ, և այլն: Տպագրութիւնը մաքուր է և պատկերազարդ: Կարելոր բառերու ներքեւ՝ ամիսի ծանօթութիւններ դրուած են, ֆրանսական մեծ բառարաններուն ման: Ամէն քաջակերութեան արժանի է Դափամաճեան էֆ. ի այս ձեռնարկութիւնը որ օգտաշատ ու ստուար բառարանով մը պիտի օժտէ մեր գրականութիւնն ու բանասիրութիւնը:

ՅԱՔԻ ԲՕՍՔԵՐ



Գոնե վայլած չըլլայի մեքմութիւնդ հեռածոր,
Բաժանումըդ այնքան մեծ աչքիս պիտի չերեւար,
Վաղուան լոյսի, փրկութեան եղանկութիւնըս բոյր,
Հեքդ հիմակ կը տանիս առանց լացի, մեղկաբար,
Գոնե վայլած չըլլայի մեքմութիւնդ հեռածոր:


Բաժանումըդ այնքան մեծ աչքիս պիտի չերեւար,
Եթէ անձիդ յանկուցիչ բովն ըզգացած չըլլայի,
Եթէ աղուոր, հրալրեօս աչքերուդ խորն անդադար
Ըզգիլանքներ փնտրած չըլլայի ես մեկուսի,
Բաժանումըդ այնքան մեծ աչքիս պիտի չերեւար:

Վաղուան լոյսի, փրկութեան եղանկութիւնըս բոյր
Շուրիդ մեջէն քեզի հետ ուրիշներուն կը սուրայ,
Կարծես քե ես անըրջող պիտի մնամ ամէն օր,
Վայելենեուն քեմ քրած: Ուրկե՞ գընեմ, եթէ կայ,
Վաղուան լոյսի, փրկութեան եղանկութիւնըս բոյր:

Հեքդ հիմակ կը տանիս, առանց լացի, մեղկաբար,
Սիրոյ տեղը՝ զոր քեզի չի հանչողներ կուրօրէն,
Հիւանդութիւն կարծեցին: Նորէն քեզի սիրահար,
Դեմիդ կառչած կը մնամ, քեւ յոյսերս խընդալէն
Հեքդ հիմակ կը տանիս, առանց լացի, մեղկաբար:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄՏԱՆՈՒՄՆԵՐ



Հակառակ իր աղուորութեանը, հրապոյրներուն և մարմնի հրաշալիութիւններուն,
կինը միշտ պիտի մնայ տկարութիւնով, զգայականութեամբ, անգիտակցութիւնով և չա-
րութեամբ շինուած էակ մը, որ լոկ գրգռումներու տեղի կուտայ, և որ միակ կարողու-
թիւն մը ունի, մոռնալ գիտնալու կարողութիւնը:

ԱՆՏՐԷ ԹԻՕԲԻԷ

Կարելի ընէ որ երկու տարասեռ էակներ կարենան իրարու հետ բարեկամանալ,
բարեկամութեամբ մը որ սեռակիցներու զգացումին հաւասարի և կամ անոր սահմանէն
անդին չանցնի:

ԺԻՎԻ ՍԱՆՏՈ

Նոյն իսկ վիշտերը օր մը կրնան վերջապէս, ժամանակի ընթացքին մէջ, մեր անձին
բարեկամութեան, մեր կատարելութեան պատճառները դառնալ:

ՄԻԼՏՈՆ

Նրկաասարդութիւնը պէտք եղածին չափ չէ տառապած՝ միտարուիլ գիտնալու հա-
մար:

ԷՐՆԷՍԹ ԼԵԿՈՒՎԷ

ՄՈՒՈՐԱՆՔ

— ❖ — ❖ — ❖ —
(ՆՈՐԱՎԷՊ)

Թ. 2.

Դ.

Առաջին հանդիպած անձը Բիւզանդ աղան եղաւ. շնորհալի կերպով բարեւեցին իրար:

«Կը ներես...» սկսաւ Սուրէն, բայց առիկա ժամանակ չթողուց իրեն վերջացնելու:

— Ատանկ բաներ կըլլայ, ըսաւ, էհ, բիացանիս ի՞նչ պիտի ըլլայ նայինք:

Ներքին խռովքը չյայտնելու համար սիկառ մը կը ծխէր, խորապէս ըմբոշնելու երեւոյթով մը:

— Ես ալ միտքս փոխեցի, պատասխանեց Սուրէն, կարծեմ քու բռնած ճամբադ է ճիշդը:

Շահերու համերաշխութիւնը մտերմութիւն մը մտցուց իրենց միջև, ու առաւօտեան բացումէն վերջը փոքրիկ բարեօրոճ մը երկուքն ալ գուարթ տրամադրութեան մը մէջ դրաւ: Ու դէմ զիմաց, իրենց գնող-գործակալին սենեակը ճաշեցին, մտիկ ընելով «խենդ Սեփոսին» կատակներուն որոնք աւանդական ժամանցը եղած էին անգործութեան օրերուն: Բայց հազիւ թէ աւարտած էին իրենց ճաշը, դուրսէն վիզլուկ մը կը բրթէր. գրգռուած, պոռչտկող խմբակ մը Սակարանէն ներս կը խուժէր. Սուրէն ու Բիւզանդ աղա դուրս նետուեցան սենեակէն ու հետեւեցան անոնց դողահար: Իրարու ետեւ շարուած նստարաններուն առջինին վրայ կանգուն, սենեակին մէջտեղի գոռում գոռում կ'ուռնէին գրէն ապշած:

«Կը ծախսեմ, կը ծախսեմ, կը ծախսեմ...»:

Ամէն բերնէ միեւնոյն բառերը կը թռչին, միշտ պակսող թուանշաններով՝ ընկերացած:

— Ի՞նչ կայ, Աստուած իմ, բացադանչեց Սուրէն:

Որոշումած դէմքով, ակռայաթափ, թափ-թըփած հագուստներով ծերուկ մը, որ միջնորդութիւն կ'ընէր ասոր, անոր, իմանալով այդ ակամայ հարցումը.

— Ի՞նչ պիտի ըլլայ, ձաբոն պատերազմ բացեր է, ըսաւ:

— Կայ շունչանորդի, պոռաց Բիւզանդ աղա, գետին նետելով ծամծամած սիկառը, իր առերեւոյթ պաղարիւնութիւնն ալ կորսնցուցած:

Սուրէն դեղեկեցաւ իր ծունգերուն վրայ, ու հազիւ կրցաւ յենուլ իր կռնակը գտնուող սիւնի մը, երբ շուարած թռչունի դէմքով մէկը, իր գնող-գործակալը, հապճեպով խօսեցաւ իրեն.

— Ի՞նչ պիտի ընես, միւսիւ Սուրէն, ամբողջ ստակդ գնաց, բացէն ալ չորս հարիւր կորսնցուցիր...:

«Ծախէ՛, ծախէ՛, գոցէ՛...» կմկմաց Սուրէն, ու մինչ թռչունի դէմքով մարդը մէջտեղի ամբոխին մէջ կը նետուէր վայնասունով մը. Սուրէն կը կմկմար դեռ.

«Ծախելու է, ծախելու է... չը՞սի ես ձեզի... ծախելու է...»:

Ժխորը կը շարունակուէր միշտ. Սուրէն իր բարձր դիրքէն, սիւնին կրթնած, կէսսիփիկ աչքերով, կը նայէր կմկմալով միշտ:

«Ծախէ՛, ծախէ՛ ճանրմ...»:

Բովը, նստարանին վրայ կ'ընէր, Բիւզանդ աղան գլուխը ձեռքերուն մէջ առած կըցկցուր խօսքեր կ'արտասանէր.

«Օլուխը, չօճուխը... կնիկը...»: — Գլուխը կերերցնէր, սև մօրուքով չըջանակուած գլուխը, աչքերու ջղային կծկումներով:

«Օլուխը, չօճուխը... կնիկը...»:

Սուրէն ուղեց թմրութիւնը թօթուել, ու վար ցատկելով, սենեակէն դուրս ելաւ. հոն միեւնոյն աղմուկը. նրբանցքին երկաթօրմէն վար միեւնոյն գոչիւնները՝ ճամբուն վրայ իր գործակալին շուարած դէմքին հանդիպեցաւ կրկին.

— Դոցեցի հաչիւդ, հինգ հարիւրի մօտ պարտական կը մնաս կոր, աման միւսիւ Սուրէն, ինչալլահ սա լիքիտասիօնին կը բերես տա ստակը...:

«Աղէկ, աղէկ» պատասխանեց երիտա-
սարդը, ու շարունակեց քայլել նրբանցքն ի
վար:

Սենեակի մը առջև մեծ խժտուք մը կար.
միջահասակ հոժեկու Յոյն մը Հրեայի մը կո-
կորդէն բռնած երեսն ի վեր կը հայհոյէր.

«Մախեցի, դո՛ւն էիր առնողը, ծախեցի»
կը պօռար:

Մինչ միւսը հազար երդումով կը ջանար
ուրանալ.

«Ես կատակ ըրի: Աստուծոյ վրայ կերդ-
նում, ես կատակ ըրի» կ'ոռնար:

Սուրէն նշմարեց բարկացած Յոյնին աչ-
քերուն մէջ նոյն նենգ շիւղթիւնը զոր նա-
խորդ երեկոյին Բիւզանդ աղայի աչքերուն
մէջ տեսած էր:

«Ինքզինքը դուրս չտալու համար՝ մարդ
չբարկանալու է» մտածեց ու շարունակեց իր
պտոյտը. քիչ մը վարը՝ հազիւ քսան տարու,
կարճահասակ, չարածճի աչքերով, բարակ
ոլորուն պեխերով Յոյն մը թևէն բռնեց:

— Միւսիւ Սատափեան, ըսաւ, Աբօսթօ-
լիտէս գործակալը հինգ հազար ոսկի կորսըն-
ցուցեր, առեր քայլեր է. իրեն հետ տարեր է
խեղճ Մանօլին ու Բուլեանի շահերն ալ,
որոնք ճիշդ կողմը բռնած էին. կռիւը տես-
նե՛ս...:

Սուրէն խնդաց ու զարմացաւ որ կրնար
կոր մէկուն բարկութեան վրայ փիլիսոփայել,
միւսին կորուստին վրայ խնդալ.

— Փախեր է, հա՛, է՛հ, ուղուր օլա, պօ-
ռաց ու առաջ անցաւ:

Ժամացոյցին նայելով տեսաւ թէ իրիկուն
ըլլալու վրայ էր.

«Հոս ի՞նչ գործ ունիմ ալ» հարցուց ինք-
զինքին ու շուրջը նայեցաւ անգամ մըն ալ:

«Կը ծախե՛մ, կառնե՛մ...». կործանումի,
քայքայումի գործը կը շարունակուէր միշտ:

«Վաստկողներ ալ ըլլալու են» մտածեց
ու բռունցքը ցցուց այդ մարդոց: Բիւզանդ
աղան ալ նշմարեց վայրկեան մը, խուժի
մը մէջ, դժգոհած, խելակորոյս:

«Ա՛խ, պատճառն ալ այս շանդաւակն է»
մօլտաց Սուրէն, որ պատասխանատուութիւնը
մէկու մը գնդաստեղծու պէտքը կրդգար:

Կամաց կամաց դէպի խորը ուղղուեցաւ,
կուզէր ետեւի սանդուղէն իջնել ծանօթներու
հետ խօսելու առիթը չունենալու համար:

Սանդուղներուն երկու կողմը ծալլապա-
տիկ նստած, ծունդ չոքած, կարգ մը մար-
դիկ, դիմացի նոյն ճակատագրային ապակիին
ու թուանշաններուն կը նայէին առանց յա-
գենալու. Սակարանի հին գոհերն էին անոնք,
տարիներու խլեակները, որոնք իրենց ամբողջ
ինչքը կորսնցնելէ վերջ չէին կարող բաժ-
նուիլ դեռ այդ մութ, մքրտ, տխրադեցիկ
չէնքէն: Ասոնցմէ մէկը, որ մուրացկանու-
թեամբ կ'ապրէր, Սուրէնին դալը տեսնելով.

«Իշթէ ըսածդ եղաւ, էֆէնտիս, մեզ ալ
մի՛ մոռնար» պաղատեցաւ:

Սուրէնի այտերը կարմրեցան, ու գլուխը
ծռեց խղճահար, ոսկի մը գլտորցնելով անոր
ափին մէջ:

«Ո՛ղջ ըլլաւ, էֆէնտիս» պօռաց մուրաց-
կանը, ու հազիւ թէ Սուրէն երկու ոտք
իջած էր, սողոսկեցաւ դէպի առաջին յարկի
երկաթորմը ու վերը մէկուն.

«Հարիւր հատ ա՛ռ» հրամայեց: Ու քովը
ի վեր նախանձող ընկերոջը.

— Ամէնուն ծախած ատենը առնելու է,
կը բացատրէր, իշթէ գաղտնիքը լատ է:

Սուրէն լսեց ու պահ մը կասեցաւ. ապ-
շեցաւ արարքին անխելքութեանը վրայ,
բայց յանկարծ շուտցուց քայլերը:

«Ատոր պէս եմ ես ալ, մտածեց: Տխմա՛ր,
տխմա՛ր, տխմա՛ր...»:

Հիմայ որ խանէն դուրս ելած էր ու վայ-
նասունը հազիւ փսիսուքի մը պէս կը հաս-
նէր իրեն, տեսաւ իր վիճակին սոսկումը ու
զարհուրեցաւ.

«Հօ՛րս ստակը, ու հինգ հարիւր ոսկի
պարտք...»:

Ներսը փուղում մը տեղի կուեննար. աչ-
քերուն առջև մութ գիկզակներ կը թռչկոտէին:

«Պա՛րտք...» երեւակայութիւնը կը չափա-
զանցէր իր կացութեան տխուր կողմը, ինք-
զինքը յանցաւոր մը, ոճրագործ մը կը նկա-
տէր, մարդիկներ կը կարծէր տեսնել, խո-
ժու դէմքերով, պուստած յօնքերով մար-
դիկներ, որոնք շուրջանակի բազմած զինքը

կը դատէին կը դատապարտէին, ու ինք
ծունգի վրայ, գլուխը կախ, աշխարհիս էն
ստորին, էն անարգ արարածը կը զգար ինք-
զինքը:

Կամուրջին մօտ ձեռք մը ուսին վրայ
ծանրացաւ ու ծանօթ զուարթ ձայն մը խօս-
սեցաւ իրեն.

— Է՛հ, լսեցի՞ր լուրը. Ստրինէն նշանուեր
է. երկուհազար ոսկի ալ դրամօժիտ տուեր
են...:

Սուրէն իմացաւ, հասկցաւ, բայց այդ-
պիսի պարագայի մը մէջ իր սպասած դա-
րոյթը չունեցաւ. նոյնիսկ անտարբեր երեւաց.
իրաց բնական ընթացքին մէջն էր այս. բող-
դին բերմունքը. քանի որ Նախախնամու-
թիւնը զինքը կը հալածէր, ճիշդ էր որ այս
դժբախտութիւնն ալ նետէր ճամբուն վրայ,
ինքզինքը նոր Բրոմէթէս մը կ'երեւակայէր
որուն կոտորած քամակը կը խարաղանէր ճակա-
տադիրը. հարուած մը աւելի, հարուած մը
պակաս, ի՞նչ փոյթ:

Սակայն երբ լրաբերը հեռացաւ, Սուրէն
վայրկեան մը մտածեց կառքի մը մէջ նետ-
ուիլ, Ստրինէին երթալ ու հրաբխային ժայթ-
քումով մը իր արհամարանքը թքնել անոր
երեսին. աղջիկ մը որ թոյլ կուտայ որ ա-
մուսնացնեն զինքը ստակով, իբր թէ ագեղ,
հինցած, անարժէք առարկայ մը ըլլար որմէ
ծնողքը ուզէին բաժնուիլ որ և է զոհողու-
թիւնով, այն աղջիկը որ իր խտէալը իրա-
կանացնելու ամէնէն մօտ եկած էր...: Ախ,
ի՞նչ բառեր պիտի գտնէր զանիկա ձաղկելու
համար, ի՞նչ հաճոյքով պիտի տեսնէր անոր
դժգունին ու կարմրիլը, կմկմալն ու դողդէ-
ղալը...:

«Հի՛նգ հարիւր ոսկի պարտք...». ձայն
մը բարձրացաւ իր մէջէն ու ընկճում մը
յաջորդեց. ի՞նչ իրաւունքով կ'եղնէր ուրիշը
դատապարտել, ինք որ ընկերական ամէն
օրէնքով ստորնագոյն անձը պիտի նկատուէր
վաղը ամէնէն, որուն երեսը թքնելու իրա-
ւունքը պիտի ունենար փողոցի անցորդն ան-
գամ: Պախարակել աղջիկ մը որ իրեն ոչ
իսկ խոստման մը կապովը կապուած էր, ոչ
իսկ գիտակցութեամբը իր անոր տաճած սի-
րուն...:

Սուրէն ճամբան շարունակեց:

Ե.

Երբ չոգենաւ մտաւ առն լերադառնալու
համար, միտքը, ամբողջ, ծնողացը վրայ
կեդրոնացաւ. ուզեց արամաբանել. ի՞նչ պիտի
ըլլար հետեւանքը իր վիճակին, պարտքը
պիտի պահանջէին, և ինք անկարող ըլլալով
վճարել՝ պիտի ստիպէին իր հայրը յարգարել
իր տղուն հաշիւները. ու իր հօրը սիրոյ ան-
հունութիւնը դիտէր. տղուն անունը անա-
ղարտ պահելու համար տունը պիտի ծախէր
ան իսկոյն: Տունը ծախել... վերջին ապաս-
տանարանը իրեններուն. երեւակայեց քայքա-
յումը իրենց բոյնին, իր հիւանդ մայրը ար-
տաքսուած իր ցաւի ապաւէնէն, հօրը ապար-
դիւն ջանքերը վերակազմելու, իր այդ տա-
րիքին մէջ, կործանած տղուն տեղը, ծերու-
թեան ու աղքատութեան հասնիլը, քրոջը
անտէր անտերունջ մնալը ու ա'լ աւելի տը-
խուր ու սոսկաղդեցիկ պատկերներ մտքին
առջև կը խռնուէին...: Ու այս ամէնուն
ի՞նք պատճառ եղած էր:

«Դարման մը, դարման մը ասոր...» ահա՛
փնտռուէր իր հոգիին, և սակայն անկարող
էր հատ մը գտնելու: Շոգենաւ ին վերնա-
յարկին վրայ ման կուգար ան, ձմրան վերջի
աղուոր ու դաղջ այդ իրիկունը, գորշ յու-
սահատութեան պատկեր մը:

Ի՞նչ կը փափաքեր տղայ մը ըլլալ,
պղտիկ լսեռ տղայ մը, որ անառակութեամբ
սխալ մը գործած էր և որուն համար պիտի
չախէին քիչ մը զինքը, ու խրատէին քիչ
մը ու պատժէին քիչ մը. և յետոյ... ամէն
բան վերստանար նախկին վիճակը, ու ան-
գամ մըն ալ կեանքը ժպտէր իրեն ու առջի
պէս: Դանի չոգենաւ կը դատուէր կամուրջի
մօտ խարսխած նաւերու խմբակէն, քանի
Հայտար Փաշայի ու Գառնիւղի կողերը ու
չէնքերը ստուերէ իրականութեան կ'անցնէին,
իր խռովքն ալ կ'աճէր: Անդամանելին
արհաւիրքը ա'լ աւելի զգալի կը դառնար:

«Անկարելի է որ ապրիմ» մըմռաց, գլուխը
ծռելով ու արցունքներ՝ բռնի՝ իրենց ճամ-
բայ մը գտան դէպի աչքերը, դէպ ի այտերը.
ի դուր շուրթները կը խաճնէր ուժգին ու

կը ջանար տեղի չտալ տկարութեան այդ արտայայտումին, լալու պէտքը իր մէջն էր ու լալու տուաւ ինքզինքը, ամբողջ...

Հիմայ ա'լ գաղափարը տիրացաւ իր մշտքին. անխուսափելի ու միակ ելքն էր այդ. իր կեանքը պարտութեան մը յանգած էր. սրճու և ինչի՞ պիտի ծառայէր ապրելով. հոգեր, հոգեր, հոգեր. ուրիշին, ինքզինքին միշտ հոգեր տուած էր, հոգեր ունեցած էր. ու վայրկեանի մը քաջութիւնը վերջ պիտի դնէր ատոնց: Անձնասպանութեան որոշումին հետ ներքին անդորրութիւն մըն ալ ունեցաւ. արցունքները չորցուց ու ժպիտով մը նայեցաւ շուրջը: Գըզ—Գուլէն արդէն հտե ձգած էին, ու ծովափն ի վեր տարածուող վերապայ օպիտակ շէնքերու յանկուցիչ տեսարանը, դիմացը ասիական եղբերքի շէնքերու շրջագիծները կ'որոշուէին տակաւ ու Գաւրգիւղի խճողուած բնակութիւնները, ծովահայրաց վիլաները, իրիկուան գորշութեան մէջ անորոշ հրապոյր մը հինի, տեւականութեան, կեանքի հրապոյրը կըստանային: Շուտով ժպիտը անհետացաւ ու կճող ցաւ մը ունեցաւ. ասոնք ձգել երթալ, կեանքէ բաժնուիլ, երբ այնքան ազուր վայելքներ կային հոն: Ու վայրկեան մը անդրադարձաւ այն ամայի անցեալին վրայ որ իրը եղած էր. երբեք չէր զգացած, մինչև այդ պահուն, դեղեկութիւնը այն գանձերուն զորս բնութիւնը կընծայէ մարդուս ամէն օր և որոնց առջև կոյր կը մնայ ան: Ախ, լուացուիլ, բուժուիլ, ազատիլ ներկայ ցաւերէն, ու երթալ հանգչիլ բնութեան ծոցը... Գիւղակ մը ուր պզտիկ տուն մը պիտի ունենար, ուր ծովին ծփծփուն հրաւէրը իր առջև, երկինքին ժպիտը գլխուն վերև ու անտառի մը խորհուրդը քովը ի վեր, պիտի մոռնար մարդկութիւնը, պիտի մոռնար անցեալը ու պիտի ապրէր, պիտի ապրէր... Աղուճը երազը. բայց ինչպէ՞ս կարելի էր մոռնալ. «Հայրս, մայրս, քոյրս...» մտածեց Սուրէն, ինչպէս մէկ քանի ժամ առաջ Բիւզանդ աղան հեծկտացած էր. «Օլուխըս, չօճուխըս, կնիկս...»:

Սուրէն յանկարծ նշմարեց թէ Գաւրգիւղի

նաւամատոյցը անցած էին ու պահ մը շուարած միաց. բայց շուտով հասկցաւ թէ սխալմամբ կղզիներու շոգենաւը նստած էր ու ասիկա մխիթարութեան պէս բան մը եղաւ. գոհ էր ուշացնելուն իր հօր հետ ունենալիք տեսակցութեան ժամը, պէտք էր որ խօսէր անոր, բայց որչափ ուշ՝ այնքան լաւ: «Գընալէն մակոյկով դիմաց կ'անցնիմ» մտածեց ու ախր քաշեց նաւավարներու կեանքին. ամէն մեկուսացողներու կեանքը իր իտէալը կը թուէր հիմայ. ախ, և թէ կարենար իրը վերսկսիլ...

«Ի՞նչ տխմար մը եղայ տղայութենէս մինչև այսօր» խորհեցաւ զայրոյթով, ինք զոր ամէն մարդ իբր օրինակ կը յցունէին ասոր անոր: Իր անցեալին վրայ խիստ ու պրպտող ակնարկ մը նետեց:

«Միջակ մը, միջակ մը միշտ, աններելի, ողորմելի միջակ մը...»:

Հաճոյք կըզգար ինքզինքը ստորնայնելով: Իրաւ, առաջիններէն եղած էր դպրոցի տարիներուն մէջ, և սակայն այդ առաջինի դիմակին տակ ի՞նչ խեղճութիւն մը կար. զ՛հ, դպրոցներու առաջինները, յաւէտ խորասուզելու, ընկղմելու դատապարտուած առաջինները, որոնց անունները դպրոցէ դուրս մարդ չսէր. սուր յիշողութիւն մը՝ հոն՝ հանճարի արտայայտումը կը նկատուի. իր դիւրին ըմբռնումը աւանդական եղած էր. ոչ ոք սակայն կռահած էր դիւրին մոռացումներն ալ: «Ի՞նչու մեր նկարագիրը չեն մշակեր հոն, որոտաց ներքնօրէն, փոխանակ մեզի թութակներ ընելու, ինչո՞ւ մարդեր չեն չիներ»: Յիշեց մէկ երկու տղաքներ որոնց յամառ հակումը ուսմանց կամ գեղարուեստի այս կամ այն մասնաւոր ճիւղին՝ ծուլութեան անուամբ մկրտուած էր, ու ամէն կերպով պատժուած ու ընդգիմութիւններու հանդիպած էր. և սակայն անոնցը եղած էր ապագան, անոնք գիտցած էին դատել, ընտրել ու հետապնդել. մինչ իրենք՝ մեծամասնութիւնը՝ հետեւողներու խումբը եղած էին, ոչխարներու պէս, առաջնորդի մը կարօտող:

Միջակ մը սիրոյ մէջ ալ, երբեք չէր զգացած ո՛չ սիրոյ բուռն ու սանձարձակ դինո-

վութիւնները, ո՛չ ալ սիրոյ դրախտային
գոհացումները. իրեն՝ սէրը տգեղ ցոյց տուած
էին ու տկարներու պէն հաւտացած էր ինքն
ալ, ու թաքուն մոլութիւնները լաւագոյն
սեպած էր յաղթապանծ ու ճաճանչող սէրէն:

Միջակ մըն ալ գործի մէջ ուր բեղուն
նախաձեռնութիւններէ զուրկ առ յաւէտ,
քաշուած տարուած էր հոսանքէն, միշտ գով-
ուած, միշտ մասնանիջ եղած իրր պարկեշտ,
յաջող, օրինակելի երիտասարդ:

Եւ անգամ մը որ կը փորձէր թօթափել
այս միջակութեան սեղմող, խեղդող շղթան,
անորակելի պարտութիւն մը կը կրէր. իր
ինքնիրեն քալելու անվարժ անդամները կը
կքէին, իր մտածելէ դադրած միտքը ցնորքներ
կուսննար. սին երազող մը եղած էր, սին
երազող մը պիտի մնար:

Լաւագոյն չէ՞ր որ մեռնէր...

Ծ. ԾԱԻԱՐԾ

(Գ. եւ վերջին մասը յաջորդով)

ԲՆՈՐԹԵԱՆ ԵՐԳԵՐԸ



Ուռիներու թաղծութեան տակ, առանձին,
Անըջայոյզ իր աչքերը կը հանդէն,
Ուռիները իրենց տամուկ զովութիւն
Վար կը կաթեն, գիրգ ու ողորկ ուսերուն.
Ու կը շողայ իր կաթնաթոյր վըտաւակ,
Գոց թաւուտքին զմրուխտ գոգը անապակ.
Յակինթ ծըղօտ ընծիւղները երերուն,
Կը փայփայեն նուրբ կորերը բումբերուն.
Երգը ջուրին՝ կը գալարի ջինջ առուակ,
Արտոյաներու մոլորայած թռիչքին տակ.
Լեւակները՝ կէս սուգի մէջ ծաղիկներ,
Շթաքարի ողկոյզներ են նրբերեր:
Անդորրութեան մէջ վարդ այգուն չէր շարժեր
Տրտում կաղնին իր դողացող ուղէչներ.
Ուր բաղեղը բիւր մոգական դրասանգով,
Կը յօրինէր թաւիչ կամար մ'իրեն քով:
Հոն, ամէն իր, մեղկ, հեշտասոյլ երգ մ'ունի,
Դաշնակութեամբ՝ այգը տօնող թռչունի,
Որք աշխուժիւ կը հաւաքուին, կաղմած պար,
Ձեռնածուի գնդիկներուն պէս ճարտար:

Երբ արեւուն շառաւիղն ալ բոյլ ոսկի,
Տերեւներուն բաշուածքէն ներս սողոսկի,
Կր դողդրղան բիւր մանհակներ երփնագոյն,
Օձապրտոյտ ճամբուն վրայ խըճուղոյն:
Ան կը կարգայ՝ անուշագիր՝ իր շուրջի
Վերընծիւղած հրմայքներուն անուրջի:
Սրբունքներուն մէջ իր բացած զոյգ թերթով
Գիրքը, հսկայ թիթեւնիկ մ'է հոգեթով,
Որ կը թառի վարդին վրայ կենսունակ,
Երբ մըշուչը՝ խորհրդապահ քօղին տակ՝
Ձիւն սարսուռով կը պարուրէ զայն համակ:
Z.

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

ՆԵՐՈՒՍԹԵՆԻ ԵՒ ԶԻՂԵՐԸ



Օ. ԶԻՖԹԷ—ՍԱՐԱՖԻՆ

Եթէ 19րդ դարը դիտութեան դարը եղաւ,
ապահովապէս 20րդ դարը ջիղերունը պիտի
ըլլայ: Խնդիր է գիտնալ թէ ջիղերն են որ
աս դարուն մէջ կը տառապեցնեն զմեզ թէ
մեք ենք որ վանոնք կը նեղենք մեր ապ-
րած կեանքին այլազան պայմաններովը: Սա-
կայն ինչ որ ալ ըլլայ, սա ստոյգ է որ 20րդ
դարուն ջղային հանդամանքէն մեծապէս
օգտուեցան գրագէտները և բժիշկները: Զը-
ղային վիճակներն են որ շատ անգամ կը
դիւրացնեն մտաւորական աշխատութիւնը.
Եթէ ոչ, բարձր խորհողները, գրագէտ
բանաստեղծ պարոնները ուրկէ՞ պիտի ստեղ-
ծէին այդքան անհաւատալի դիւրութեամբ և
մեքենական արագութեամբ գրչի հիանալի
արտադրութիւններ, անճամարտանման իրա-
կանութիւններու, հոգեկան կնճռոտ երեւոյթ-
ներու նկարագրութիւններ: Բժիշկը տարին
տասնհերկու ամիս գործ ունի, որովհետեւ
ջղային անձը մասնաւոր յամառութեամբ մը
չուղէր բժշկուիլ. ամէն օր ինքզինքը ա՛լ
աւելի ծանր հիւանդ կը կարծէ: Այս բոլորը
ուրկէ՞ առաջ պիտի գային, եթէ մեր ջիղերը
պահ մը խելքերնին գլուխնին ժողուէին,
լըջօրէն գործէին և ծնունդ չտային խել մը

անըմբռնելի երեւոյթներու : Շատ անգամ հանդիպած ենք ջղագրգիռ մարդոց, անհանդուրժելիօրէն չփացած, — ըստ իրենց՝ նրբացած, — տիկիներու որոնք ամէն տարօրինակութիւն կը գործեն ու ինքզինքնին արդարացնել կը ջանան «ձեռքս չէ, ջղային եմ» ի պաշտպանողականով : Ուրեմն ի՞նչ հեշտ է ապրիլը սա 20րդ ջղային ներողամիտ դարուն մէջ :

Ջղային հիւանդութեանց տեսակներն անթիւ են, որոնց մէջ կա՛ն որ միմիայն ֆիզիքական են, կան որ հոգեկան տառապանքներու գոյութեան կամ չգոյութեան արդիւնք են. իսկ մաս մըն ալ կան որ պարզապէս չփացածութիւն են : Հոս պիտի պարզեմ նախ անոնք որ իրապէս դարմանի, բժշկական դարմանի կը կարօտին, յետոյ անոնք որ անմիջապէս կը բուժուին եթէ իրենց ծնունդ տուող պատճառները վերցուին. և վերջապէս անոնք որ իսպառ կ'անհետին երբ հարկ եղած խստութիւնը ի գործ դրուի :

Յօդուածիս նիւթ եղող ջղային վիճակը միայն մեր ժամանակին յատուկ չէ . Բրիտոսէ 430 տարի առաջ Իբոկրատ և Կալիէն շատ լաւ կը ճանչնային այս տարօրինակ վիճակը : Այս ի՞նչ յուսախաբութիւն նորասէրներու համար, իրենք որ դարավերջիկ հիւանդութիւն մը կը կարծէին զայն . . . :

Շատերը այս հիւանդութիւնը մկրտեցին *asthénie nerveuse* անունով, ոմանք աւելի կրճատելով *névrose* անունը յարմար դատեցին, ուրիշներ *nervosisme* և վերջապէս *neurasthénie* բառին վրայ խորիսխ նետեցին : Զարմանալի բան, ոչինչ կրցած է այնքան մեծ համբաւ չահիլ, որքան *neurasthénie* որ քաղաքակրթեալ երկիրները պտտեցաւ, շողշողուն սալօններէն՝ երս սպրդեցաւ, ամէն տեղ շատ սիրալիք ընդունելութիւն գտաւ : Մարդիկ տեսակ մը խելալիդութեամբ սիրեցին այս հիւանդութիւնէն վարակուիլը, զարգացեալ ճանչցուելու անհրաժեշտ պայման մը նկատեցին, իրենց անբաժան ընկերը ըրին զայն : Անիկայ գրկաւաց ընդունուեցաւ մասնաւանդ բարձր դասու տիկիներէն, որոնք փայփայեցին զայն և ուխտեցին յաւիտեան

չբաժնուիլ անկէ . հաճելի զբաղում մըն էր ատ որ կրնար փարատել իրենց անգործ ու միօրինակ կեանքին ձանձրոյթը, և յետոյ անկէ աւելի զօրաւոր զէնք ուրկէ՞ պիտի զըտնէին սա անսիրտ էրիկ մարդոց յաղթելու համար . ո՞ր էրիկ մարդը սիրտ պիտի ունենար մերժելու *neurasthénique* կնկան մը այլանդակ քմայքները . մասնաւանդ գործ ունէր այն էրիկ մարդը որ տկարութիւնը ունեցած էր խոստովանելու թէ կնկան արցունքները մասնաւոր ազդեցութիւն մը ունէին իր վրայ . ա՛լ լացը ու ողբը անպակաս պիտի ըլլային տանը մէջէն . ամենաջնջին պատճառ մը ժամերով պիտի լացնէր տարաբաղդ(?) կիներ : Վերջապէս տիկիները այնքան չաղապատուեցան անոր հետ որ գրեթէ նոյնացան և եղան երկոյթան մարմին մի, ու այսօր կին ըսելով ջիղ պէտք պէտք է հասկնալ ու փոխադարձաբար : Սակայն հակառակ գեղեցիկ սեռին կողմէ ցոյց տրուած այս ջերմ ընդունելութեան, *neurasthénie* իր ճիրանները կ'երկնցնէ 100ին 7) համեմատութեամբ էրիկ մարդոց . — արդեօք ա՞ն ալ կը վախնայ կիներէն :

* *

Տարիքի տեսակէտով *neurasthénie* ընդհանրապէս կը պատահի 25—50 տարեկան մարդոց, իսկ զբաղման տեսակէտով դիտուած է որ աւելի ենթակայ են մտաւորականները, բազմահոգ ասպարէզներու հետեւողները, ինչպէս մեծ գործարանատէրներ, վաճառականներ, մեծ հաստատութեանց վարիչներ, բուֆէտէօններ, ուսանողներ, արուեստագէտներ, գրագէտներ, բժիշկներ, գիտուններ, ենթակայ են նոյնպէս ան երիտասարդները որոնք բարոյական մտաւանջութիւններ ունին, ինչպէս նաև այն երիտասարդները որոնք մրցման կը մասնակցին Պանդայի, Ռէժիի ու նմանօրինակ մեծ հաստատութեանց մէջ պաշտօն մը ձեռք բերելու համար, և որոնք իրենց աշխատութեան աւելի անյաշողութեան վախէն է որ կը տանջուին : Ենթակայ են նոյնպէս անգործ երիտասարդներ որոնք ապագայի անստուգութենէն կը տառապին : Այն անձերը որոնք իրենց մէկ ան-

վրնաւ հիւանդութեան վրայ կը սեւեռեն մը տաժումին ու միշտ ախոր, մտահոգ ու սեւ տաժումներով ինքզինքնին կը չարչարեն. նոյնպէս ենթակայ են անոնք որոնք ու եւ իսէալ մը կը հետապնդեն ու անոր չհասնելու վախը ունին և վերջապէս բոլոր անոնք որոնք հոգ չունին (բարեբաղդաբար այս կարգի մարդոց թիւը շատ վտիտ է ներկայ ժամանակին մէջ) և որոնք նոյնքան ցաւալի են տառապել. նոյն համար առանց որոշ պատճառի, տառապել. նոյն համար ձանձրոյթ է և միօրինակութենէ: Հետեւաբար իբր բացայայտ ճշմարտութիւն կրնանք ընդունիլ թէ ժառանգականութենէն վերջ, որ ամէնէն մեծ դերը կը կատարէ, մտաւորական չափազանց յոգնութիւնը (surmenage cérébral) ու բարոյական յոգնութիւնները (surmenage moral) ինչպէս նաև վիշտեր, կսկիծներ, սուգերու շարքը (traumatisme moral) շատ անգամ տեղի կուտան ջղային վիճակին:

Ջղային մարդիկ գրեթէ միշտ կը տառապին սաստիկ գլխացաւէ, ու մանք կը կարծեն թէ հերիւնով մը կը ծակեն իրենց գանկը. ու մանց գլուխը կարծես մամուլի մը տակ առած կը սեղմնն, ուրիշներու այնպէս կը թուի թէ իրենց գանկը պարապ է ու օտար մարմին մը կը պարունակէ: Այս գլխացաւերուն կը միանայ երբեմն քունքին, ճակտին և աչքին խորը թափանցող ցաւ մը որ առաւօտները անկողնէն ելած ատեն կըսկսի ու գրեթէ ամբողջ օրը կը տեւէ, միայն ճաշերէ վերջ ցաւը իր սաստիկութիւնը կը կորսնցնէ:

Ջղային հիւանդները կը զգան տեսակ մը յոգնութիւն որ անկարող կը դարձնէ զիրենք ու եւ գործի զբաղելու, շատ անգամ սանդուխէ ելք մը կը բաւէ զանոնք չարաչար յոգնեցնելու, և անոնք ընդհանրապէս առտուն անկողնէն ելած առեմնին իսկ ինքզինքնին յոգնած կը զգան և այդ խոնջէնքը պատճառ կը դառնայ աշխատութենէ զվուելու: Գոնէ հանդարտ քուն մըն ալ չունին, գիշերուան մեծ մասը անքուն կ'անցընեն և եթէ քնանան՝ սոսկալի մղձաւանջներ կ'ունենան. երբեմն այնքան կ'ահաբեկին որ քնանալ իսկ չեն ուզեր այդ դարձուրելի ու յամառ երաշ-

ներէն չպաշարուելու համար: Անոնք ճաշերէ վերջ իրենց դէմքին վրայ կը զգան տեսակ մը տաքութիւն, ողնայարի և երկու ուսերու մէջտեղ ցաւ. դժուարամարսութիւն և պընդութիւն անպակաս են անոնց քով: Այս կարգի ջղայիններուն վիճակը իրաւամբ ցաւալի և կարեկցական է, միշտ մտազբաղ, տխուր, իրենց քով յիշողութիւնը կը պակսի ինչպէս նաև աշխատելու եռանդը, կամքը. ամէն բան զիրենք կը վհատեցնէ և ինքզինքնին կը նկատեն մէյմէկ անդարմանելի հիւանդներ, կը կարծեն վարակուած ըլլալ անբուժելի ախտերէ, ջնջին ախտանշաններու մեծ կարեւորութիւն կուտան. ընդհանրապէս ինքզինքնին թոքախտաւոր կը նկատեն, և երբեք չեն ուզեր համոզուել թէ բոլորովին անվատ է իրենց հիւանդութիւնը, մանաւանդ անոնք բժիշկ փոխելու մոլութիւնը ունին. օր մը հիւանդանոցին մէջ հանդիպեցայ երիտասարդ աղջկան մը որ կատարեալ ջղային մըն էր, հետաքրքրուի թեմաբ հարցուցի թէ քանի՜ բժիշկի դիմած է. բնական ձեւով մը պատասխանեց «Երկու տարուան մէջ 37 բժիշկ փոխած եմ»: Եւ սա յամառ համոզումը գոյացուցած էր թէ դեռ ոչ մէկ բժիշկ կրցած էր հասկնալ իր հիւանդութիւնը: Դարմանք. — Այս կարգի ջղայիններուն գլխաւոր դարմանն է իրենց հիւանդութեան վրայ շատ չմտածել, երեւակայական պատճառներով ինքզինքնին չտանջել և բժիշկին պատուէրները կէտ առ կէտ գործադրելու համբերութիւնը ունենալ. իրենց հաճելի թուած մարդոց հետ տեսակցիլ, ծովեզերեայ պտոյտներ ընել, մաքուր օդ շնչել, դաշտերու, լեռներու վրայ զբօսնուլ օրը քանի մը ժամ բժշկական գիրքեր շատ չը կարդալ, կարելի եղածին չափ հեռացնել ջնաւ. այն պատճառները որոնք տեղի տուած են իրենց հիւանդութեան: Երիտասարդ աղջկաները կամ կ'ինքնը իրենց մարսողական գործարանին մասին լսնամբ տանին, իսկ տարիքոտ կ'ինքնը եթէ իրենց ծննդաբերութենէ վերջ կամ ու եւ պատճառաւ արգանդային հիւանդութիւն ունեցած են, դարմանել տան ինքզինքնին:

★ ★

Այս պարզ նէօրասթէնիքներուն քով կը

գանուին՝ բաղադրեալ (?) ջղայինները որոնք բոլորովին տարբեր, տարօրինակ երեւոյթ մը ունին. ասոնց քով շատ անգամներ կը տեսնուին նէօրասթէնի, իսթէռի, ջղային ժառանգականութեան և այլասերման ախտանշաններու խառնուրդ մը. ասոնք մէյմէկ neuropathesներ են, այս կարգի ջղայիններուն հոգեկան վիճակը իսկապէս անտանելի է թէ՛ իրենց և թէ՛ զիրենք չըջապատողներուն համար: Երբեմն կը պատահի որ մոռցուած անուն մը կամ ու է նուագի եղանակ մը յիշելու յամառութիւնը կունենան և ժամերով ինքզինքնին կը տառապեցնեն. տեսնուած են անանկներ ալ որ մոռցուած բառի մը համար անհաւատալի յամառութեամբ և ուշադրութեամբ Լաուուսի բառարանը ծայրէ ծայր թղթատած են. ասոնք ջղային այնպիսի վիճակներ են որ կամքը թաղարծակապէս անկարող է այս տարօրինակ քմահաճոյքը կասեցնելու ինչպէս նաև գերազոյն ճիգերու օժանդակութիւնը գրեթէ միշտ անզօր կը մնայ:

Տեսակ մը ջղայիններ ալ կան որոնք համբելու մոլութիւնը ունին. իրենց առօրեայ զբաղումներուն կամ ժամանցի մեծ մասը յատկացուցած են համբելու. առանց չափազանցութեան, իրենց ափողը երջանկութիւնը հոտ կը կայանայ, անոնք ամէն բան կը համբեն, փողոց քալած ատեն իրենց քայլերը, իրենց հանդիպած բարեկամին, տուներու պատուհանները, շոգեկառքի վակոնները, իրենց կերած պտուղները, ճաշարանի կամ սրճարանի յաճախորդները, փողոցէ անցնող մարդիկը:

Օր մը Բոօֆ. Կոասէին քլինիքը հանդիպեցանք այս կարգին պատկանող տարաբաղդ ջղայինի մը որ ճամբան դացած ատեն հանդիպել է 13 հատ գինիի մեծ տակառներով բեռնուած սայլի մը. իր անհուած սովորամոլութեանը համեմատ՝ անգամ մը այդ տակառները մեծ ուշադրութեամբ կը համրէ, քանի մը վայրկեան վերջ կասկածը իր մէջ կարթննայ թէ մի գուցէ սխալ համրած ըլլայ և աճապարանօք ետ կը դառնայ և մանրակիկիտ խղճմտութեամբ վերստին կը համրէ:

Վերջապէս երրորդ և չորրորդ անգամ ալ կը համրէ. և այս անստուգութենէ վերջ սա ճշմարիտ համոզումը ունեցած էր թէ տակառները սխալ համրուած էին:

Nevropathe մըն էր նաև Զօլան, փողոցէ անցած պահուն իր ճամբուն վրայ գտնուած լապտերներուն և դուռներուն վրայ նշանակուած թիւերը խղճմտօքէն համբելու տկարութիւնը ունէր, ու մանաւանդ վարձու կառքերու թիւերը որոնց իւրաքանչիւր թուանշանը զատ զատ կը գումարէր այն համոզումով որ եթէ գումարը երեքով ճիշդ բաժնուի, իրեն համար նպաստաւոր էր. վերջի ժամանակներուն մէջ (Ֆեռնելէն քիչ առաջ) 3 թուանշանէն ձանձրացած՝ իբր բաժանարար 7 թուանշանն էր որ զինքը կ'ապահովցնէր. 17 թուանշանը իր վրայ թախծալի տպաւորութիւն մը ձգած էր, և օր մը կառքէ մը տապալուելով շուտ մը կառքին թիւը իր ընտրած մէթոտով կը գումարէ և... 17 կը գտնայ. ալ կրնաք երեւակայել թէ հոգեկան ի՞նչ դառն վիճակով մը տառապեցաւ այն օրը խեղճ Զօլան:

Երկար ժամանակէ ի վեր սա հաստատ համոզումն ալ ունեցած էր թէ իր ամէն ձեռնարկներուն, դիմումներուն մէջ կատարելապէս կը յաջողէր՝ եթէ տունէն մեկնած ատեն աջ ոտքով սկսէր քալել:

Մոմբէլիե

ՄԻՒՌՈՆ ԶԻԼԵԱՆ

ՍԵՅՆԹ-ԼՈՒԻՍԻ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԸ

Յուցահանդէսին Լինտըլ փողոցի մուտքէ՝ է՛ն նախընտրելին է: Մուտքէն ներս՝ առաջին անգամ Սէյնթ Լուիսի բարձրաւանդակին պիտի հանդիպի այցելուն, Խաղաղութեան Արձանով և Լուիզիանայի Կոթողով՝ դրուագուած, ու վերջնոյն գագաթէն պիտի կրնայ գաղափար մը կազմել Յուցահանդէսին մեծութեանը վրայ: Ասոնց անմիջապէս կը յաջորդէ բլուրին ճիշդ ճակատը՝ Լուիզիանայի վաճառուելէն վերջ կազմուած, 14 նոր նահանգներուն ի պատիւ կառուցուած աշտա-

րակը, խնջոյքի սրահը, արեւելեան և արեւմտեան տաղաւարները, և այս տեսարանին ճիշդ կեդրոնը՝ բլուրն ի վար վազող երեք ջրվէժները։ Ասոնք թէև դեռ սկիզբ՝ բայց արդէն շատ խօսուն և շեշտակի կը բացատրեն Յուցահանդէսը կազմակերպել տուող յիշատակին ազնուութիւնը։ Plazaին անդիլի կողմը, Լինտըլի մուտքէն մղոն մը դէպի արեւմուտք, վարչութեան կեդրոնին Մուտքը հաստատուած է, որ նորութիւն մը կ'ընծայէ ներկայելով օտար տեղութեանց շէնքերը։ Այս մուտքէն ուղղակի ներս կ'երկարի Համալսարանի Ուղին որ մէկ մղոն երկայնութիւնէ վերջ՝ երկրագործական մուտքին կը միանայ ուրկէ այցելուն, կրնայ Անտառին գեղասքանէ ծառերը զիտել անկուշտօրէն։ Անտառէն ո'չ շատ հեռուն՝ կը բարձրանան երկրագործական և պարտիզպանական շէնքերը։ Յուցահանդէսին դետիններուն հիւսիսային արեւելեան կողմը նահանգային շէնքերուն մուտքը կայ, ուրկէ՝ Միացեալ Նահանգներու այլեւայլ կողմերէ եկող Ամերիկացին շատ զիւրաւ կրնայ իր նահանգային շէնքը գտնել, իսկ օտարականը՝ կրնայ որոշակի գտնուղանել այս տաղաւարներուն անհրման շինուածքները։

Լինտըլի և Յուցահանդէսի Վարչութեան Մուտքերուն գրեթէ կեդրոնը ուրիշ մուտք մընալ կայ որ Բայք (Pike) կը կոչուի, ուրկէ բոլորովին տարբեր վայր մը կ'առաջնորդուի, զբօսանքի բաժինն է այն որ նոյնպէս Բայք կը կոչուի։ Տակաւին շատ ուրիշ մուտքեր ալ կան Յուցահանդէսին շրջափակէն դուրս և ներս, այնպէս որ՝ այցելուն գոնէ երկու շաբաթ շարունակ բան մը պիտի կրնայ գըտնել՝ աչքի զարնող։

Յուցահանդէսին վրայ վերիվերոյ գաղափար մը կազմելու համար՝ ելեկտրական երկաթուղին է՝ն յանձնարարելին է։ Միայն 10 սէնթ (8 մէթալիկի չափ) վճարելով կըրնաս ամբողջ Յուցահանդէսին շրջանը կատարել և շէնքերուն գլխաւոր ծրագիրներն ըմբռնել։ 50 սէնթ վճարելով կրնաս ինքնաշարժով ծառուղիներուն մէջէն երթեւեկել, և կամ կոնտուրայով մը՝ արհեստական ջրանց-

քին վրայ նաւարկել։ Այս ծառուղիները և ջրանցքները բոլոր գլխաւոր շէնքերուն կըցուած են և գեղ մէկ շէնքէն միւսը կ'առաջնորդեն յաջորդաբար։

Առաջին իրիկունը՝ երբ այցելուն Նահանգացի Աշտարակը և Ջրվէժը լուսազարդուած տեսնէ՝ մտքին մէջ հոյակապ յիշատակ մը պիտի ստանայ, միշտ թարմ և յանկուցիչ։ Լայն առումով՝ Յուցահանդէսը այնպէս մը կազմակերպուած է, որ նոյն իսկ էն բժականիւր այցելուները կրնան իրենց ճաշակներուն կատարեալ դոհացում տալ։ Պ. Ուրիլըմ է. Սաւնորըս, Յուցահանդէսին կարեւոր պաշտօնեաներէն մէկը — որուն տեղեկագիրէն քաղած եմ յիշած մանրամասնութիւններ — սապէս կ'ըսէ — «Շիքակոյի Բուր Լպիակոն Յուցահանդէսը այցելողները զիւրութեամբ կրնան մտարեքել անձեր որոնք վեց շաբաթ շարունակ մուտք վճարեցին՝ լոկ Հունգարական նուագախումբը չսելու և ո'չ ուրիշ բան։ Այս անձինք երբ Սէնթ Լուիս գան, երբեք չպիտի ուզեն բաժնուիլ Գեղարուեստներու տաղաւարներէն»։

Հողագործ մը թո՛ղ շարունակ այցելէ Երկրագործական տաղաւարին ցեղունին ներքեւ ամփոփուած 20 արտավար գետինը ուր՝ երկրին առաջ բերած ամէն տեսակ արտադրութիւններ կերեւան, իրենց է՛ն խրթին պարագաներով և լուծումներով։ Հանքերով հետաքրքրուող անձ մը՝ երբ կ'ըլչ (Gulch) արհեստական ոսկեհանքը տեսնայ՝ ուրիշ ամէն ցուցադրութիւններ ասոր հետ անբաղդատելի պիտի նկատէ։ Սակէ զատ, ժամանակակից հանքագործութեան մէջ կիրառուած ամէն նորերուկ կերպեր և եղանակներ հանքաքանական և մետաղական Շէնքին մէջ դետեղուած են պատշաճօրէն։

Առնուազն գոնէ երկու ժամ վատնելու է այս ութը խոշոր շէնքերէն — որոնց մէկ քանիին վրայ խօսեցանք — իւրաքանչիւրը տեսնելու համար։ Նախ՝ Զանազան ճարտարարուեստից Շէնքը բլաճախի արեւմտեան կողմը, ուր ճարտարարուեստ ամէն տեսակ արտադրութիւններ ցուցադրուած են իրենց բոլոր մանրազնին կիրառումներով, և հա-

ւաքուած ճոխ պէսպիսութիւնը՝ գեղարուես-
տական հանգամանք մը կուտայ, Բլաձախն
ուրիշ մէկ կողմը կառուցուած է Արտադրու-
թեանց Շէնքը որու ցուցադրութիւնները
լոկ առեւտրական են: Ասկէ վերջ կուգայ
Գեղարուեստներու շէնքը, — վաճառականա-
կան և կրթական ցուցադրութիւն մը, — փա-
ռաւոր հեռադիտակներ, ջրացեալ օդ՝ իր
շինուելու կերպերովը, և այլն եւ այլն: Ան-
կարելոր չէ ըսել թէ՝ ամէն շէնքի մէջ, ըլ-
լայ շինուածքներու, հողագործական բերքե-
րու, կամ դիտական հետազօտութիւններու,
ճուցահանդէսին զուտ նպատակը եղած է՝
ներկայացուած ամէն առարկայի մէջ՝ ծրագ-
րուած բացատրութիւնները լիովին պատկե-
րացնել: Արուեստական ջրանցքէն անդին
դէպի արեւմուտք կը բարձրանայ՝ կրթու-
թեան և Ընկերային կենցաղագիտութեան
շէնքը. հոս՝ ճշգրտական անոնաւորութեամբ մը
դետեղուած են՝ ներկայիս մէջ գործածուած
բոլոր ելեկտրական կիրառումները: Այս շէն-
քին մօտ ամփոփուած է նաև մեքենաներու
տաղաւարը ուր կը տեսնուին 45,000 ձիու
ուժ ունեցող ելեկտրա-լուսազարդման մե-
քենաները: Վերջապէս կուգայ փոխադրու-
թեանց շէնքը, 1,300 սոք ծաւալ ունեցող
գետինով մը, ուր՝ պարունակուած են այժ-
մէական այլեւայլ փոխադրական կառքեր՝
սկսեալ ճաքոնական ճեմրիֆֆօսէյն մինչև
200,000 լիպրա կշռող երկաթուղիի վայրա-
շարժը:

Օտար տերութեանց տաղաւարներուն մէջ՝
Մեծն Բրիտանիոյ Բէնսփինկթընի նարնջանոցը,
որու յարակից է յետին ծայր պնծուած չինա-
կան տաղաւարը: Չինականին հանդիպակաց
կողմը՝ կը բարձրանայ Շուեթական Ագարա-
կային տունը. վերջինէն դէպի արեւմուտք
միեւնոյն դիրքին վրայ շինուած են Պելժիոյ
և Աւստրիոյ տաղաւարները: Ֆրանսա՝ իր
անմրցելի «Grand Trianon»-ով բաւական
ընդարձակ գետին մը գրաւած է: Բուլպա,
Սիամ, Նիքարակուա և Պրազիլ՝ իրենց տա-
ղաւարները՝ ճիշդ Մեծն Բրիտանիոյ և Ֆրան-
սայի գետիններուն մէջտեղը շինած են: Իտա-
լիոյ, Արճենթինաի, Մեքսիկոյի, Հնդկաս-

տանի, Սէյլանի, Ալյասկայի և Հոլանտայի
տաղաւարները՝ իրարմէ քիչ հեռաւորութեամբ
շինուած են: Գերմանիա՝ նահանգային Աշ-
տարակէն կէս մղոն անդին Շարլօթընպուրկ
դղեակը կառուցած է: Ասկէ զատ՝ Գերմա-
նիա անտառային ցուցադրութեան և անտա-
ռային, ձոնկի և որսի յատուկ տաղաւարին
մէջ յատկանշական տեղեր գրաւած է: Ֆի-
լիպեան կղզիներու բաժինը՝ երկրագործա-
կան շէնքէն դէպի արեւելք — հետաքրքրա-
կան պէսպիսութիւն մը ունի: Ամբողջ օր մը
հաղիւ պիտի բաւէ դիտելու համար գիւղերը,
պարսպաւոր քաղաքը, դաշտային տեսարան-
ները և հաղար Ֆիլիքինօններու առօրեայ
կեանքը: Ճուցահանդէսին այս մասին վրայ
կան նաև մարմնամարզական, օդադնացու-
թեան և ղինուորական մարզային տեսարան-
ներ, յոյժ հետաքրքրաշարժ:

Ճարտի Շինսէնտըն ապարանքը և իրեն
վերաբերեալ յարակից տաղաւարները՝ առան-
ձին դիրք մը բռնած են՝ բարձրաւանդակի
մը վրայ: Այցելուն այս կէտերէն կը մեկնի
և գեղարուեստից շէնքը կը հասնի՝ Լիբանանի
եղեւիններուն և Սողոմոնի արտոններուն մէ-
ջէն անցնելով: Գեղարուեստից տաղաւարին
մէջ՝ ուսումնասիրելու շատ հաճելի պատե-
հութիւններ կը ներկայանան, նկարներ,
նուրբ գործուածքներ, և զարմանալի փո-
րագրութեանց սրահը:

Դեռ բան մը չըսինք Միացեալ Նահան-
գաց կառավարական շէնքին, ծովային պա-
տերադմիկներու խումբին, պատերադմական
հիւանդանոցին, և կամ կեանք երկարող ցու-
ցադրութեանց վրայ: Ասոնք ամէնն ալ ան-
շուշտ իրենց արժանի ուշադրութիւնը պիտի
գրաւեն:

Այս ամենէն վերջ կը մնայ տեսնել «Բայ-
քը»: Ընդարձակ գետին մը որու մէջ կը
տեսնուին Թիրօլեան Ալպեանները, իռլան-
տական, ճաքոնական, ռուսական, ֆրանսա-
կան, էսքիմական գիւղեր, Հէկընպէքի՝ մար-
դուած կենդանիներու հարուստ հաւաքածոն,
Սէվիլի սպանիական փողոցները, և հին
Հռոմը: Ստեղծագործումը, կալվէսթընի
ջրհեղեղը, ծովու տեսարանները, Բարիզը, և
հրաշալի Ասիան:

«Բայք»էն զատ ուրիշ զբօսանքի վայրեր ալ կան որոնք իրենց զուարթացնող առաւելութիւնները միշտ ունին, օրինակի համար Երուսաղէմը, Գիտական Անիւը՝ Նիւ-Եօքէն մինչև Հիւսիսային Բեւեռ, հաւաքուծական ագարակը և այլն:

Վ. Ա. Գ.

ՎԻՃԵՆԱԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԳԵՍԸ

Եղանակին կրթական հանդէսներուն մէջ՝ ամէնէն ուշադրանքներէն մէկն է Վիճենական Միթարեան Հարց Բանկալթիի վարժանա-նին ամալերջի հանդէսը որ աշակերտաց ծնողքներէն զատ, կը համախմբէ ստուար բազմութիւն մը կրթասէր ազգայիններու, եկեղեցական ու աշխարհական ծանօթ անձ-նաւորութեանց եւ այլն: Երկսեռ հրաւիրեալներու նոյն ընտրեալ բազմութեամբ տեղի ունեցաւ նաեւ այս անգամ, չորեքշաբթի օրը, վարժարանի պարտէզին մէջ՝ հովանաւ տաղաւարի մը վերածուած՝ որուն ճակատը կը ծածանէին օսմանեան եւ աւստրիական դրօշները: Հանդէսին կը նախագահէր Հայ Հռոմէականաց Պատր. Փոխանորդ Տ. Աւետիա արքեպիսկ. Արմիարեան՝ շրջապատուած եպիսկոպոսներէ ու վարդապետներէ: Աւըստրիական դեսպանատան կողմէ ներկայ էր ընդհ. հիւպատոս Պ. Սաֆէրովիչ, Թարգման Պ. Պլինսքիի եւ ուրիշ պաշտօնեաներու հետ:

Ազգ. Պատրիարքարանի կողմէ ներկայ էին Տ. Բարգէն եւ Տ. Տիրայր Վրդ.ները, Ուսումն. Խորհուրդի ատենապետ Տօքթ. Վահրամ էֆ. Թորգոման, Ռէթէոս էֆ. Պէրպէրեան, Աղեքսանդր էֆ. Փանոսեան, լրագրապետներ եւ այլն:

Հանդէսը բացուեցաւ կայս. Համիտիէ քայլերգով զոր ուսանողները նուագեցին ջութակի վրայ, դաշնակի ընկերակցու-թեամբ, եւ որ յոտնկայս ունկնդրուեցաւ ու ծափահարուեցաւ: Յետոյ սկսաւ յայտադրին գործադրութիւնը, պէսպիսութեամբ լեցուն, Բարձր. կարգի ուսանողներէն Պ. Բ. Ար-

ձեան Թուրքերէն եւ գերմաներէն ներկու բա-նախօսութիւններ արտասանեց, նուագածու-թեանց ընդմիջմամբ, իսկ Պ. Ս. Երազեան՝ հայերէն: Երաժշտական նորութիւն մըն էր Միթար Աբրահօր ձօնուած նուագը՝ զոր հեղինակած էր Պ. Սինանեան եւ տպագ-րուած՝ Հ. Մէնէվիչեանի նախաձեռնու-թեամբ: Հինգ դպրոցականներու կողմէ ներ-կայացուած սիրուն Թատերախաղէ մը ետքը, վարժարանին վերատեսուչ Հ. Գաբրիէլ Վրդ. Մէնէվիչեան կարդաց տարեկան տեղեկագիրը որ միանգամայն գիտակից տեսութիւն մըն էր կրթական գործին վրայ: — Երբ վարժարան մը հանդէս մը կը սարքէ, ըսաւ Վեր. Տե-սուչը, պէտք է որ հոն ներկայացուին բուն իսկ վարժարանին ներքին ուժերը: Եւ ո՛չ թէ դուրսէն եկած տարրեր: Օտար լեզու-ներու ուսուցման տրուած կարեւորութեան անցնելով, յայտնեց թէ Միթարեան վար-ժարանին մէջ ակներեւ արդիւնքներ ձեռք կը բերուին անով. Ֆրանսերէն խօսելավար-ժութիւնը պարտաւորիչ է հոն աշակերտնե-րուն համար ու յաջորդ տարի գերմաներէն խօսիլն ալ պարտաւորիչ պիտի ըլլայ որուն մեծ մղում կը տրուի արդէն: Հ. Մէնէվիչ-եան դիտել տուաւ թէ չատ սխալ կը մտա-ծեն մեր ծնողքները նախամեծարութիւն տա-լով եւրոպական վարժարաններուն, մինչդեռ մերինները՝ ինչպէս Կեդրոնական, Պէրպէր-եան, Միթարեանց եւ ուրիշ կրթական հաս-տատութիւններ յաջողապէս կրնան մրցիլ անոնց հետ: Եւրոպական վարժարանները իրենց մայրենի լեզուին ոյժ կուտան ամէնէն աւելի. մերիններուն մէջ՝ երեք — չորս լեզու միանգամայն կը մշակուին, ինչ որ անհրա-ժեշտ է յաջողելու համար գործի ասպարէզին մէջ: Հայ վարժարան մը միայն կրնայ մշա-կել հայ տղան եւ տեղական պէտքերու հա-մապատասխան կրթութիւն մը տալ: Միթ-թարեանց անցեալ շրջանի շրջանաւարտներն ամէնքն ալ դպրոցէն ելլելուն պէս կրցած են լաւ գործերու հետեւիլ, ինչ որ է՛ն պատուաբեր պարագան է այդ հաստատու-թեան համար: Վարժարանը այս տարի ունի 128 ուսանող, ցերեկեայ ու գիշերօթիկ:

Համակրելի Վերատեսչին տեղեկադիրը ունենդրուեցաւ ուշադիր հետաքրքրութեամբ, որմէ ետք տեղի ունեցաւ վիճակացոյցերուն ընթերցումը և՛ արժէքաւոր առարկաներու բաշխումը՝ իրեւ նուէր յաջողակ աշակերտներուն:

Հանդէսին երկրորդ մասը տեղի ունեցաւ Նոյնպէս նուագումներով, և զանազան լեզուէ բանախօսութիւններով ու արամախօսութիւններով որոնց մէջէն մասնաւորապէս հաւնուեցաւ «մշտնջենաւոր շարժումը» զոր հեղինակած էր Հ. Մէնէվլիւեան, սրամիտ ու երգիծարան ոճով մը, զոր արտասանեց Պ. Ա. Եփրեմեան: Արժիարեան Գերապայծառ փակեց հանդէսը, հակիրճ յորդորական մը ուղղելով աշակերտներուն և գոհունակութիւն յայտնելով վարժարանին յառաջագէտ վիճակին համար, ու բանախօսութիւնը վերջացուց բարեմաղթութիւններ ընելով Վեհ. կայսեր արեւշատութեան համար:

Վերջին անգամ նուագուած եղանակը եղաւ Աւստրուհունգարական քայլերգը, որ անգամ մըն ալ ցոյց տուաւ երաժշտութեան տրուած մղումը Միլիթարեանց վարժարանին մէջ և աշակերտներուն յաջողակութիւնը:

Շատ հաճելի տպաւորութեան մը ներքեւ մեկնեցան հանդիսականները, որոնցմէ շատեր եկեղեցական ու աշխարհական՝ իրենց խնդակցութիւններն ու շնորհաւորութիւնները յայտնեցին վանատան մեծաւոր Հ. Գրիգորիս Վրդ.: Գալէմբեարեանին և Վարժարանին վերատեսուչ Հ. Գաբրիէլ Վրդ. Մէնէվլիւեանին, որոնց ջանքերուն շնորհիւ աշակերտները տարուէ տարի զգալի յառաջդիմութիւն ցոյց կուտան ուսմանց, գիտութեանց, լեզուներու և դեղարուեստի ճիւղերուն մէջ, և գերմանական ուղղութեամբ լաւադասն կրթութիւն մը կը տրուի անոնց:

ԽՄԱՌԱՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Երուսաղէմի Վանքի գործերուն քննիչ պատուիրակ Գէորգ էֆ. Աւրանեանի աջակցելու պաշտօնով՝ շարժուա սկիզբը մեկնեցաւ

մայրաքաղաքէս Կարապետ էֆ. Խաչատուրեան որ իր հետ կը տանի Պատրիարքարանի հրահանգներն ու պաշտօնաթուղթերը:

Կայս գնահատում. — Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Դ. Կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհուած է՝ Սէրէզի երկաթուղւոյ կայարանին պետ Յարութիւն էֆ. Պասմաճեանի՝ ի վարձ իր բարւոք ծառայութեանց: Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանենք թէ Ե. Կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհուած է Բանկալթիի Զինուորական Վարժարանի վիմագրական ճիւղին պետ Տիրան էֆ. Թէրզեանի:

Մեքսիկէն գրուած նամակէ մը ցաւով կիմանանք թէ տեղւոյն Ուսումն. Խորհուրդի ատենադպիր Պետրոս էֆ. Ուրֆալեանի մայրը մեռեր է և յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարուեր են Ատանայի մէջ, հանդիսաւորապէս, խուռն բազմութեան մը ներկայութեամբ: Ուրֆալեան էֆ. տեղւոյն ծանօթ ազգայիններէն է և մասնաւորապէս մեծ հոգածութիւն ունի Մէքսիկի դպրոցական գործին յառաջդիմութեանը վրայ: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք իրեն՝ իր բարի ու առաքինազարդ մօրը մահուան առթիւ:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԳԻՍ

Այս երկուշաբթի օր Գուղիուհնուքի եկեղեցւոյն մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ՝ Ղալաթիոյ Խնամակալութեան ատենապետ և ծանօթ վաճառական Յակոբ էֆ. Էսաեանի Ազն. քրոջ՝ Օր. Սրբուհի Էսաեանի պսակադրութիւնը Միսաք էֆ. Մակարեանի հետ, օգնական Իզմիրի ընդհ. դատախազին: Արարողութեանց նախագահեց Տ. Գէորգ եպիսկ. Երէցեան որ պարագային յարմար քարոզ մը խօսեցաւ: Կնքանայութիւնը կատարեց Լեւոն պէյ Փափաղեան:

Հարսնեւորներու երկսեռ բազմութիւնը, կրօնային արարողութիւններէն ետք, առաջնորդուեցան Էսաեանց բնակարանը ուր պատուասիրութիւններ եղան և շնորհաւորութիւններ ուղղուեցան նորաստեղծ ամուսին:

ԱՐՄԱՇԷՆ կը հաղորդեն թէ, այս կիրակի՝ 27 յունիս, բարեյիշատակ Միքայէլ էֆ. Յակոբանի մահուան քառասնօրէին առթիւ, հոգեհանգստեան պատարագ և պաշտօն պիտի կատարուի Չարխափան Ս. Աստուածածնի տաճարին մէջ, որուն բարեգարգութեան նախանձախնդիր եղած էր միշտ հանգուցեալը, և անցելոյն մէջ վանքին ըրած նպաստներէն զատ, վերջերս ալ սիրայօժար կերպով հոգացած էր Մոմատան մը և Տաճարին աւագ դրան Ապակէղրան շինութեան ծախքերը:

ՏԻԿԻՆ ԻՍԿՈՒՇԻ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Բողոքականաց նախորդ Ազգապետ և ծանօթ Տպարանապետ Յակոբ էֆ. Մատթէոսեան դառնաղէտ սուգով մը համակուեցաւ իր ամուսնոյն Տիկին Իսկուհի Մատթէոսեանի անակնկալ մահուամբ, որուն առթիւ արտայայտուած ցաւակցական արտայայտութիւններուն կը միացնենք նաև մեր համակիր վշտակցութեան զգացումները՝ ծերունադարձ Յակոբ էֆ.ին, որդւոյն՝ Վահան էֆ.ի, և ամբողջ ընտանիքին:

Ինչպէս տեսնուեցաւ յուղարկւորութեան տխուր հանդէսին նկարագրութենէն, զոր հրատարակեցին օրաթերթերը, թէ՛ Գընալը — Կղզիի մէջ և թէ Ֆէրիգիւղ՝ գերեզմանատան մատրան մէջ, հանգուցեալ Տիկնոջ դադաղին շուրջը համախմբուած և վշտահար ամուսինն ու որդին շրջապատած էին ո՛չ միայն Հայ Բողոքական հասարակութեան ամէն դասակարգերը, այլ և մեր ազգայիններէն բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններ, վաճառական, բժիշկ, փաստաբան, գրագէտ, լրագրագետ, ուսուցիչ, արուեստագէտ, արհեստաւոր և այլն, իւրաքանչիւրը իր միութարութեան բաժինը ընծայելով: Որովհետև, Մատթէոսեան Տեարք՝ իրենց տպարանական ընդարձակ գործառնութիւններով՝ երկար տարիներէ ի վեր անմիջական հաղորդակցութեան մէջ գտնուած են հայ համայնքին մտաւորական կեանքին հետ, ու մեծապէս

նպաստած հրատարակչական գործին ծաւալմանը ու ճոխացմանը: Այս տեսակէտը նոյնքան շարժառիթ մը եղած էր ցաւակցական ինքնաբեր արտայայտութիւններուն՝ որքան հանգուցեալ Տիկնոջ թողած բարի յիշատակը իրեն ծանօթ ընտանեկան շրջանակներուն մէջ, իբրև աղնիւ և առաքինի ամուսին և մայր, զոր զգայուն շեշտերով նկարագրեց Բոֆ. Յակոբոս էֆ. Ճէճիգեան՝ մատրան մէջ իր խօսած գեղեցիկ դամբանականովը:

Գընալը — Կղզիի մէջ մասնաւոր պատիւներ ընծայուեցան Ս. Լուսաւորիչ եկեղեցիի Թաղ. Խորհուրդին և քահանաներուն կողմէ, այս վերջինները՝ զգեստաւորեալ և երգեցիկ դպիրներու ընկերակցութեամբ՝ հոգեհանգըստեան աղօթքներ և Աւետարան կարդալով: Մատթէոսեանց բնակարանին մէջ, կրօնային արարողութիւնները կատարեց Վեր. Ա. Շմաւոնեան, որմէ ետք՝ երկու շոգեհանաւաններով յուղարկւորները փոխադրուեցան Գապաթաչի նաւամատոյցը և անկէ կառքերով Ֆէրիգիւղի Աւետարանական մատուռ, ուր արարողութեանց ներկայ գտնուեցաւ նաև Տ. Մկրեան Հայրը:

Թաղումը կատարուեցաւ մատրան կից գերեզմանատան մէջ, և հանգուցեալ Տիկնոջ մարմինը ամփոփուեցաւ իր վաղամեռիկ աղջըկան՝ Օր. Պայծառ Մատթէոսեանի գերեզմանին մօտ, որուն մահուան առթիւ հոգեյոյլ գիրք մը հրատարակած է ատենօք վշտահար հայրը, պատկերացնելով սգաւոր հօր մը գտած հոգեկան մխիթարութիւնը հաւատքի զօրութեամբ: Ազգականներու և բարեկամներու կողմէ շրջուած քսանի չափ պսակներով ծածկուեցաւ գերեզմանը, որուն մօտ ներկաներն անգամ մըն ալ յայտնեցին իրենց վըտակցութիւնները:

Ս. Պատրիարք Հայրը ցաւակցական քաղեր շրջած էր Յակոբ էֆ. Մատթէոսեանի եւ Վահան էֆ. Մատթէոսեանի՝ իրենց ամուսնոյն եւ մօր մահուան դառն սուգին առթիւ:

Արժանեք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ

Տպագրութիւն ԱՐՄԱՇԷՆ Օրագրի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տօքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական աստիճանը կատարելագործած է Բարիդի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չուած է. այժմ հաստատուած է, Բերա Պէոյիւք Բարմաք Գարու, թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ ստանցմէ զատ նորագոյն մեթոտներով կը բուժէ ջղային եւ հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգասեղանացուած (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անգամայուծութիւն եւ կարկամութիւն եւ այլն: Ասկէ զատ, սակորի եւ սօթորակոն խոյր (սըրուճա), առանց գործողութեան նոր դրութեամբ մը կը դարձնէ, տեղը առանց յայտնի ընելու: Տօքթ. Էմիրզէ էֆ. կը գտնուի. Բերա Պէոյիւք Բարմաք Գարու, թիւ 16 տան մէջ, ուր կիրական զատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի. եւ արեւթ օրերն ալ ձրիաբար կը դարձնէ հիւանդները:

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն սեռակ բօհաֆիյէ ապրանաջ

Մեծ—Շուկայ, Բիւրքիներու դրան կից, Բ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սուլթան—Համամ, Միաիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց եւ կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղեւորութիւն, եւ շիւրամատչելի գիներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ադամ Վարդեան մեծապէս գոհ թողցած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հոգալու համար:

ՏՕՔԹ. Է. ՉՈՒՔԼՕՍ

Մասնագէտ փորի հիւանդութեանց (ստամոքսի, աղեաց) ինչպէս նաեւ փորոզիտեան ախտերու:

Տօքթ. Է. Չուքլօս ար 17 տարիէ ի վեր ի գործ կը դնէ իր արուեստը, վերջերս այցելած է Եւրոպայի գլխաւոր հիւանդանոցները ուր մօտէն հետեւած է իր մասնագիտութիւնը կազմող հիւանդութեանց դարմանումի նորագոյն մեթոտներուն: Կը դարձնէ թէ՛ չափահասներու եւ թէ՛ տղոց ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւնները: Բիմիական տարրաւաճում (որակական եւ քանակական) եւ մանրադէտական քննութիւն ստամոքսային հիւթերու: Կը բուժէ երկարականութեամբ եւ մասսաժով: Կը դարձնէ ջերմամիզութիւն իրեն յատուկ դրութեամբ եւ դեղերով:

Հիւանդներ կ'ընդունի ամէն օր ժամ 9էն 12 եւ 2էն 5 (Ը. Ե.), իր բնակարանին մէջ Բերա, Տէրվիլ փողոց, Թէփէ—Պալէի պարտէզին դէմ: Կիներուն համար սպասման առանձին սրահ: Ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւններէ առաւապող աղքատները կ'ընդունի չորեքշաբթի օրերը ժամ 9էն մինչեւ կէս օր:

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ՄՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՇՈՒԹՅԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուեյարդարութիւնը եւ վաճառումն այժմ լուծեալ էֆթիմօրուլօ եւ Ընկերութեան տան ապրանքներուն: Ընկերութեան վաճառատունը կը գտնուի Սթամպուլ, Սուլթան Համամ, Բագթիվան խան: Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Փընտըգճի փողոցը գտնուող մթերանոցը: Վաճառքներն են մետաքսեղէն, թուիչ, բիւշ, բրդեղէն, բամպակեղէն, օրք կանխիկ գնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ՝ արդի գիներուն բարձրացումէն առաջ եւ անպիսի գիներով, զորո առկարելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին այժմ հրապարակի վրայ տնօրոցելի պայմաններով: Հասարակութիւնն եւ վաճառականք կը հրաւիրուին տեսնել այս վաճառքներն եւ ոգտուիլ ներկայ տեսնելալ առիթէն:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՍՔ

1881 մարտ 20ի կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՍՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ եւ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՍՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ եւ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԱՐԱԿԻՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուկոս

54,000,000

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան

խան, Վոյվոտա, Դալաթիա

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օծիսի, արկածի, ցմահ բռնակի ճիւղեր

VICTORIA

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւններ ունի թէ՛

DE

բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան

BERLIN

Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ

ընդ վճարումները չաբաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար. Բայակտն հրովարտելով եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա

եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Տնօնչ

Պոլիս Քաբըրնեզոյու խան

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԷՃԵԱՆ

Բիւ 45, Եւ 45 Բ.

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎՈՂԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Դ Դ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Դ Դ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Իւնիոն» ապահովագրեցող կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՔՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒՌԻ ԵՒ ՎՆԱՍՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏԵՐԵՄՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Գաբրէր Օղլու

Մասնաճիւղ Դալաթիա, Ինայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ



ՅՈՎԱՏԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԴՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկահաճ Իեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 16

Զբոսանեան արաւքման

Պալպալեան ամէն օր ակուայի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիրքերու տնային ծամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակուայները: Ցորեկները ակուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին համբէն կարսեալ է: Վկայեալ տառամատուցի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղփասներուն ճիշ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեւակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, գիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւս կ'առնուին. իսկ ապառիկ զբօնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆՍԵՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԵՏՈՒՄԱԿՍԻ ԵԱՆԱԳՐԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային անկանքներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնի կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Գրամատուեն է՝ Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնե
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Ք. ՅԵՐԱՍԵՐԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ՍԻՆԿԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՐՈՐԴ ԳԵՂԱՐՈՒԹԵԱՍԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՀՐԱԻԷՐ

Սինկէր Ընկերութիւնը պատիւ ունի ծանուցանել իր բաղժաթիւ յաճախորդներուն եւ բոլոր հանրութեան առհասարակ, թէ իր երբեք Գեղարուեստական Յօցահանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ, սեպտեմբերին: Այս Յօցահանդէսին մէջ պիտի ընդունուին Սինկէր Տան յաճախորդներուն կողմէ պատրաստուած տսեղնագործութիւնները: Սինկէր Ընկերութիւնն ուրիշն է ուրիշն հրաւիրելով գեղարուեստական տսեղնագործութեամբ պարագայը բոլոր արհիւնները, որպէս զի մասնակցին այս ցուցահանդէսին, ուր իրենց յազակցուած է մասնաւոր սրահ մը: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար կը խնդրուի դիմել Ընկերութեան տնօրէն նշանակուած վաճառատուներէն մէկուն: Մասնակցելու խնդրանքներն ինչպէս նաեւ պատրաստուած գործերը, պիտի ընդունուին ամէնօր, կիրակիներէն զատ, մինչեւ 31 օգոստոս (Ն. Տ.):

Բերա, 1. Մեծ փողոց, Պոնաթէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին. 2. Մեծ փողոց Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ, Կալաթա, 1. Սինկէր խան. թիւ 121 եւ տեւը. 2. Գարաբէօյ, Բերայի Թրամուէյներուն կայարանին դէմ: Սրամայուլ, 1. Սուլթան Համաժ, 2 թիւ. 2. Սուլթան Պայազիւ, Թրամուէյի կայարանին դէմ, թիւ 13. Սկիւսար, 2 արշը պօյը, թիւ 120:

ՏՕՔԹ. ԱՆԹՈՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մաքնագիտ. ծածուկ եւ մորթային ախտերու
Բերա, Սերգիս փողոց, Թ. 20
(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիեննայի Համալսարանէն ուր ուսած է տասնութէկ տարի, միեւնոյն ատեն իր օգնական—բժիշկ ծառայած ըլլալով Բրոֆ. Նաւմանի, Քարօսիի եւ Տիֆֆէլի գաղտնի հիւանդութեանց յատուկ քլինիքներու մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ մորթային ախտերէ տառապողները կ'ընդունի զորս կը բժշկէ նորագոյն եւ կատարելագործեալ մէթոտներու համաձայն: Իր մասնագիտութենէն դուրս՝ օրեւէ հիւանդ չընդունիր:

ՏՕՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական վարժարանին, անդամ Բարիզի Բժշկական համաժողովին: Մասնագէտ՝ արանց եւ կանանց ծննդական գործարաններու հիւանդութեանց: Պատույ վկայագիր ունի Պէրիւնի, Լանտոնի, Բելթայի եւ ուրիշ երկրներու Ակադեմիաներէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակ իր մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը, կամ մարշին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Ինչ Բերա, Թաքսիմ, Փրամասկան հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.):